

ԲԻԱՅՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԷԹՆՈՀԱՄԱԽՄԲՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ
Յակոբեան Ա. (ՀՀ ԳԱԱ արեւելագիտութեան ինստիտուտ, Հայաստան)
jakobialex@yahoo.com

Բանալի բառեր՝ Բիայնա, Արմինա, Արմենիա, Ռի-արտու, Արարատ, Էթնոս:

1. Վերջին տասնամեակներում հայ էթնոսի (ժողովրդի) կազմաւորմանը մանրակրկիտ անդրադարձած ուսումնասիրողները (Յ. Կարապետեան, Մ. Կատուալեան), յենուելով Թ. Գամկրելիձէի եւ Վ. Իւանովի յայտնի տեսութեան վրայ, այդ գործընթացն ընկալում են որպէս արդիւնք նոր էթնոսների կազմաւորման 3 ուղիներից (Յ. Բրոմլէյ, Յ. Հարութիւնով, Ն. Չեքոքսարով եւն) երկրորդի՝ էթնիկական համախմբման - էթնոկոնսոլիդացիայի, ընդ որում՝ էթնոմիքսացիայի տարբերակով (այսպիսով՝ ո՛չ էթնիկական պարզ մասնատման - էթնոսեպարացիայի, եւ ո՛չ շրջակայ էթնոսների տեւական կլանումով էթնոէվոլիւցիայի): Այդ էթնոհամախմբումը համարւում է ընթացած Բիաինական տէրութեան մէջ, որն իր վերելքի շրջանում միաւորում էր ողջ Հայկական լեռնաշխարհը եւ կոչւում նաեւ Ուրարտու, Արարատ եւն, իսկ Ք.ա. Է-Ջ դդ.՝ արդէն նաեւ Արմինա, Արմենիա: Տուեալ էթնոգործընթացն ընդգրկել է Բիաինելի բնակչութիւնը կազմող ինչպէ՛ս հնդեւրոպախօս, այն է՝ տեղաբնիկ նախահայախօս, լուվիախօս, իրանախօս եւ եկուոր թրակա-փոհլգիախօս (մուշկեր), այնպէ՛ս էլ խուռի-բիաինախօս, եւ գուցէ՝ նաեւ այլ (սեմախօս, քարթուէլախօս) ցեղերին, որոնք մինչ այդ առանձին ցեղային էթնիկ ինքնագիտակցութիւն ու ինքնանուանումներ ունէին: Այդպէս առաջացել է ընդհանուր եւ կայուն ինքնագիտակցութեամբ վերցեղային էթնոս՝ ժողովուրդ, որն ընդունել է դեռեւս քննարկելի

ստուգաբանութեամբ հայ < *հայո- ինքնանուանումը (էթնոնիմ, էնդոէթնոնիմ) եւ ծաւալով գերակշիռ՝ նախահայերէնով խօսող ցեղերի լեզուն, կամ, աւելի ճիշտ, նրա՝ խոռոհ-բիաինական բաղաձայնական համակարգով հարստացած միջցեղային կոյնէն, որն այդ պահից արդէն կարելի է կոչել հայերէն: Նորակազմ հայերի համար ընդունելի են եղել այս կամ այն ծագում ունեցող այն այլանուանումները (էքզոէթնոնիմ), որոնցով նրանք ճանաչուած էին հարեւանների մօտ, այն է՝ արմէններ, Արմինա եւն (հնդեւրոպական ժողովուրդների՝ իրանցիների, յոյների մօտ), սոմէխներ (քարթուէլական ցեղերի մօտ) եւ ուրարտացիներ, Արարատ: 2 2. Էթնոհամախմբման ճանապարհով կազմաւորուած էթնոսի կարեւոր յատկանիշն այն է, որ նրանում տարալուծուած նախկին էթնոբաղադրիչները կորցնում են լոկ իրենց էթնիկ ինքնագիտակցութիւնը, իսկ նրանց թէ՛ հոգեւոր, թէ՛ նիւթական մշակոյթի տարրերը (բացի լեզուից) փաստօրէն անխաթար թափանցում են նոր էթնոսի ձեւաւորուող մշակոյթ (դրա դիմաց՝ էթնէվոլիւցիայի ուղիով ծաւալային նոր պատկեր ստացած էթնոսի մէջ կլանուող բաղադրիչները միմիայն կենսաբանական լիցք են տալիս նրան:

3. Մովսէս Խորենացու մօտ ներկայացուած՝ Հայկ նահապետի ու նրա սերունդների տարածման ուղիները համադրելով Թ-Ը դդ. բիացիների նուաճումների ուղղութիւնների հետ՝ կարելի է նկատել առաջինի ծագումնաբանական կապը երկրորդի հետ եւ դրանում ենթադրել հայ էթնոսի կազմաւորման իրական պատկերի ինչ-որ ձեւով արտացոլումը Հայկի եւ Բելի «առասպելում»: Մուծածիրի, Տուշպայի, Արծաշքուի (Վանայ լճից հիւսիս) եւ Դայաենի-Հարքի կենտրոնների շուրջ ամրապնդուած ու Ասորեստանի արշաւանքներին դիմակայած Բիաինական պետութիւնը Ք.ա. Թ դ. վերջերից սկսում է իր պարբերական ռազմարշաւներով ընդլայնուել դէպի հիւսիս՝ Երասխի վերնահովիտ (Անաշէ, Երիքուախէ), Արարատեան դաշտ, Շիրակ (Երիախէ), Սեւանի աւազան ու աւելի հիւսիս (Ալիշտու), Գուգարք

(Կաթարգա, Զաբախա եւն), Տեյաւելխէ-Տայք, բուն Սիւնիք (Ծուլուկու), Արցախ (Ուրտեխիւնէ, Բերգիրա-Բերծոր եւն), ապա նաեւ՝ Պարսկահայք ու աւելի հարաւ, Աղծնիք (Ալգիւնէ, Ուրմէ), Ծոփք, Բարծր Հայք ու աւելի արեւմուտք՝ այդպիսով Ը դարում դառնալով շատ հզօր տէրութիւն: Գրեթէ նոյն պատկերով, ըստ Հայկեան պատումի՝ Բելին յաղթելիս, արեւելեան Կործայքից (Կադմոսի տուն) Վասպուրականի Հայոց ձորով դէպի Տուրուբերանի Հարք գաւառ տարածուած Հայկի սերունդներն անցնում են Երասխի ձորահովիտ, ծաւալւում դէպի Արարատեան դաշտ, Շիրակ (Շարայ), Գուգարք (Գուշար), Գեղաքունիք (Գեղամ), բուն Սիւնիք (Սիսակ), Արցախ-Ուտիք (Առան), Ծոփք (Տորք) եւն՝ հիմք դնելով Հայկ նահապետից «սերուած» եւ իր մէջ Արարադ երկրի աւելի վաղ բնակիչներին «մերագնացրած» հայ «ազգին» եւ Հայաստան - Արմենիա «աշխարհին»: Այս նմանութիւնը թոյլ է տալիս հայերի էթնոգենետիկ առասպելական պատկերացումներում դիտարկել «հայ ազգի» կազմաւորման գործում բիացիների դերի մասին յիշողութիւնների պահպանումն ու արժեւորումը (համեմատութեան համար՝ մերօրեայ հասարակական պատկերացումներում հայ ժողովրդի կազմաւորման գործընթացում բացարձակացւում է լոկ վաղնջահայերէնի կրողների ունեցած դերը, որի հիմքում էթնոգենետիկ եւ գլոտտոգենետիկ շփոթն է):

4. Նման ձեւով է հայերի հետագայ ծագումնաբանական պատկերացումների մէջ ներթափանցած թւում նաեւ Ք.ա. Դ դ. յոյն հեղինակների կողմից արձանագրուած՝ Յասոնի որդի Արմենոսի առասպելապատումը, որը կարող է համադրուել (ըստ Հ. Աւետիսեանի) հայ էթնոսի համախմբման գործընթացի մասնակից մէկ այլ բաղադրիչի՝ ուրումէացիների ցեղի յայտնի տեղաշարժի հետ Բարծր Հայքից դէպի Ծոփք եւ Աղծնիք (Ք.ա. ԺԲ դ.):

THE HISTORICAL-CULTURAL CHARACTERISTICS OF ARMENIAN NATION'S
ETHNOCONSOLIDATION IN THE STATE OF BIAYNNA

Yakobyan A. (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of Oriental Studies, Armenia)